

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 4817
20 JAN 2021
Կից Եջիմ

«27» դեկտեմբեր 2021թ.

No 5162 - Ա

ՍԵՐԲԻԱՅԻ «ՀԵՄՈՖԱՐՄ Ա.Դ., 26300, ՎՐԶԱՑ, ԲԵՈԳՐԱԴՄԿԻԻ ՊՈՒՏ
ԲԲ ՓԱԹԵԹՎՈՐՈՂ, ՈՐԱԿԻ ԵՎ ԲԱՑ ԹՈՂՆՄԱՆ ՀՍԿՈՂ, ՀԵՄՈՖԱՐՄ Դ.Օ.Օ.,
78000, ԲԱՆՅԱ-ԼՈՒԿԱ, ՆՈՎԱԿՈՎԻԶԻ ԲԲ, ԲՈՍՆԻԱ ԵՎ ՀԵՐՑԵԳՈՎԻՆԱ- ԲԱԼՔ
ԱՐՏԱԴՐՈՂ» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ԴԵՂԻ
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ «ՀԵՄՈՖԱՐՄ Ա.Դ., 26300, ՎՐԶԱՑ,
ԲԵՈԳՐԱԴՄԿԻԻ ՊՈՒՏ ԲԲ, ՍԵՐԲԻԱ») «ԻԲՈՒՊՐՈՖԵՆ-ՀԵՄՈՖԱՐՄ,
ԻԲՈՒՊՐՈՖԵՆ, ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱՊԱՏ, 400ՄԳ; (30/3X10/
ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ
ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 2-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 10.12.2021 թվականի N 0103120521 բացասական եզրակացությունը՝ Սերբիայի «Հեմոֆարմ Ա.Դ., 26300, Վրշաց, Բեոգրադսկիի պուտ բբ- փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Հեմոֆարմ դ.օ.օ., 78000, Բանյա-Լուկա, Նովակովիչի բբ, Բոսնիա և Հերցեգովինա- բալք արտադրող» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «Հեմոֆարմ Ա.Դ., 26300, Վրշաց, Բեոգրադսկիի պուտ բբ, Սերբիա») «Իբուպրոֆեն-Հեմոֆարմ, Իբուպրոֆեն, դեղահատեր թաղանթապատ, 400մգ; (30/3x10/) բլիստերում» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 20361 առ 10.12.2021թ. բացասական եզրակացությունը, առ այն, որ որակի փորձաքննության արդյունքները չեն համապատասխանում նկարագրություն կետով: Դեղի որակը չի համապատասխանում օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Տեսե՛ք. 28.12.21 Լ 14⁰⁰ թ

1.Մերժել Սերբիայի «Հեմոֆարմ Ա.Դ., 26300, Վրշաց, Բեոգրադսկիի պուտ բբ- փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Հեմոֆարմ դ.օ.օ., 78000, Բանյա- Լուկա, Նովակովիչի բբ, Բոսնիա և Հերցեգովինա- բալք արտադրող» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «Հեմոֆարմ Ա.Դ., 26300, Վրշաց, Բեոգրադսկիի պուտ բբ, Սերբիա») «Իբուպրոֆեն- Հեմոֆարմ, իբուպրոֆեն, դեղահատեր թաղանթապատ, 400մգ; (30/3x10/) բլիստերում» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

27.12.2021

X

ԱՆԱՅԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157